ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/3679/02/24 ք. Երևան
17 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Արամ Մկրտչյանի, ծանոթանալով «Հազարաշեն» ՍՊ ընկերության հայցադիմումին ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 16/62979-24 ծանուցմամբ «Հազարաշեն» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-23/67 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գործարքը անվավեր ճանաչելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

«Հազարաշեն» ՍՊ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 16/62979-24 ծանուցմամբ Հազարաշեն ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-23/67 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գործարքը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր առկա չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝

մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ. հուլիսի 1-ը:
3. Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող Երևանի քաղաքապետարանից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել «ԵՔ-ԲՄԽՄԾՁԲ-23/67» ծածկագրով գնման ընթացակարգի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:
Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արամ Մկրտչյան

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Fri, 17 May 2024 11:35:07 GMT+04:00

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am